— Դա մի առանձին օգուտ չի բերի, — պատասխանեց Ասլանը իր սովորական սառնութեամբ: — Ոչնչացնելով մի հասարակութեան միջից աւազակներին, մենք դրանով աւազակութիւնը ոչնչացրած չենք լինի: Դա ասիական կոշտ միջոց է չարութիւնը բառնալու համար: Մարդկային կեանքի մէջ ոչ մի երեւոյթ՝ առանց նոյն հասարակութեանը յատուկ պատճառների՝ երեւան չէ գալիս: Վեր առնենք մի աւազակ, մի մարդասպան, մի ստրուկ եւ քննենք նրանց կեանքի պատմութիւնը, կը տեսնենք, որ նրանց կեանքն այնպիսի պայմանների մէջ է դրուած եղել, որ աւազակը պէտք է աւազակ լինէր, մարդասպանը՝ մարդասպան եւ ստրուկը՝ ստրուկ: Փոխի՛ր իրանց կեանքի պայմանները, եւ դու կը տեսնես, որ նրանք օրինաւոր մարդիկ կը դառնան: Եւ այսպէս, մենք միայն պիտի ցաւենք, որ մեր մէջ յայտնւում են անպիտան մարդիկ, բայց դատապարտել նրանց չենք կարող, որովհետեւ մեր հասարակութիւնը իր փտած կազմակերպութեամբ ինքն է ծնել այն մարդիկներին: Եւ եթէ մենք ցանկանում ենք, որ չարագործութիւնը բառնանք, պէտք է աշխատենք նախ ուղղել հասարակութեան վատ կազմակերպութիւնը, եւ այն ժամանակ նրա անդամները բոլորը լաւ մարդիկ կը լինեն:

— Ես ձեր ասածները չեմ հասկանում, — պատասխանեց Մարօն, — թէ ինչու մարդիկ այսպէս կամ այնպէս են լինում: Ես գիտեմ միայն, որ պէտք է օձի գլուխը ջարդել, երբ տեսնում ես, որ նա պատրաստել է քեզ խայթելու: Ես երդուել եմ սատկեցնել քեռի Պետրոսին նրա համար, որ նա իմ հօր թշնամին է, եւ այս դիտաւորութիւնը արդէն յայտնել էի Ֆարհատին:

— Քո նպատակը շատ մասնաւոր է, — ասաց Ասլանը, — սրանով շատ չես օգնի «ընդհանուր գործին»: Եթէ այստեղ լինէր մեր ընկեր Կարօն, նա գուցէ կը համաձայնուէր քեզ հետ, բայց ես համարում եմ այդ մանուկ սրտի բորբոքում եւ աւելի ոչինչ:

Առժամանակեայ մտածութիւնից յետոյ նա դարձեալ խօսեց.

— Եթէ օձը մի հատ լինէր, որպէս դու ասացիր, պէտք էր նրա գլուխը ջարդել, այսպիսով մենք ազատուած կը լինէինք գոնէ մի չարագործից, բայց դժբախտաբար նրանց թիւը շատ է: Ես եղել եմ Ասիական Տաճկաստանում, Կոստանդնուպոլսում, Եգիպտոսում, մի խօսքով ամէն տեղ, ուր կան հայեր: Ես բաւականաչափ ուսումնասիրած եմ մեր ազգի թէ ներկայ եւ թէ անցեալ կեանքը: Ես տեսել եմ, որ սկսած ամենաստոր քուրդ իշխանի դռնից, սկսած նահանգական կուսակալ փաշաների դռնից, մինչեւ վէզիրների դռները, մինչեւ սուլթանի բարձրագոյն դուռը, բոլորը բռնուած են քեռի պետրոսներով: Եւ որքան մեծ անձի մօտ է նրանց ծառայութիւնը, այնքան մեծ է եւ նրանց վնա-